

ունակ դաս ունեցած քեզպահ ճամփառների տարրերի գլուխ է ուստի մասունքները ուղարկել մասունքներ մի զայտություն պահպանայ պահպանի է և առ ապարանու առ առ պահպանավետ զայտություն է ին մեջ առ առ:

ՀԻՒՄԱՍՎՅԻՆ ՎԱՅՈՑ-ԶՈՐ

Տորահովիտ Հերհերի:— Սա ձեւում է Վայոց ձորի հիւսիսարենի ամսում, հիւսիսից գէպի հարաւ, գրեթէ ուղղաձիգ, Զորահովիտի հիւսիսային մասում տարածւում է Քոթանլուի լեռնողաշոր, որի վրայ բարձրանում է կոնսակ Թափասի-դալիկ կամ Դալիկ-թափա հարթային գագաթը. փոքր ինչ էլ հարաւ նշանաւոր է Դրմբու-դիմելյ լիսուը Զորահովիտի միջով հոսում է Քոթանլուի կամ Հերհերի գետակը, որ սկիզբն է առնում Դարալագեազի հիւսիսային լեռների Մուրաս-թափա, Սանգախիդազ, Խարուց-զայ և այլ զագաթներից: Սրա ճետ միանում է Դարախիլ-չայ գետակը, սկիզբն առնելով Թերէ-զննդուրան լիսից: Զորահովիտի առաւելապէս արենելեան մասում, Հերհերի և նրա վատիների ափերին աճում են վորքիկ անտառներ, իսկ լեռներն ընդհանրապէս զուրկ են ծառերից:

Ղարախլու-չայ և Հերհեր-չայ գետակների միջավայրում, Սանգախին լեռնան լանջին, մի առուակի եզրին տեղաւորուած է Գէնըսարայ գիւղը, որ ունի 28 տուն թուրք բնակիչ, 134 ար. 132 իգ. իմիասին՝ 266 հոգի:

Սրանից հարաւ, Թոթանլու գետակի ձախ ափին, մաս ժամանակներս հիմնուած է Արալըի թթարանակ, փոքրիկ գիւղը, որից հարաւ, փոքրիկ հովառում, գետեղուած է Քոթանլու թթարանակ գիւղը, Այսուեղ կայ հայկական մի եկեղեցու աւերակ, մատին մի 3 ½, արշին բարձրութեան, կապուտպյոն խայլար Ն.Մ. (439—990) թռականի արձանազրութեամբ¹⁾: Նոյնպիսի մի եկեղեցու աւերակ և մի քանի ընդգարձակ գերեզմանատներ ժի՞ դարու խաչքարերվ զանուում են այս գիւղից գէպի արևմուտք, հին Քօթանլի գիւղատեղում, որտեղից այս գիւղի ընակիցները տեղափոխուել են այսուեղ՝ ջրի պակասութեան պատճառով: Հայր Ալիշանի կարծիքով այս հին Քօթանլուն նախկին Գուտենի գիւղը պիտի լինի:

Այժմեան Քօթանլուի բնակիցները թուրքեր են, 56 տուն, 309 ար. 217 իգ. իմիասին՝ 526 հոգի:

Թօթանլուի հանդէպ, գէպի արենելը, հրաշալի լրճեկէցի մօս

¹⁾ Ցես արձունազրութեան մասում:

սեղմուռած է Գէօգ-Արաս թրքարնակի, փաքրիկ զիւղը, որ նոյնապէս կայ մի հայկական եկեղեցու հիմնապատեր և մի քանի խաչքար, Սրանցից մինի վրայ քանդակուած է Թրիստոսի պատկերը, զլիի երկու կողմամբ մի մի աղաւնի, որանց ներքն մի մի խաչակիր, կանգնած մարդ, և աւելի ներքն մի առիւծ և ցուլ. Արձանագրութեան թուականն է ԶԼԴ—1545.

Բնակիչները բոլորն էլ թուրքեր են, 25 տուն, 118 ար. 92 բգ. իմիասին 210 նոգին:

Այստեղից մօտ հինգ վերսատ զէպի հարաւ զանուում է այս ձորանովամբ ամենամեծ զիւղը՝ Հերհեր, որ հաւանականորէն Օրբելիանի կազմած զիւղերից ցուցակի մէջ յիշուած Օրբերն զիւղը պիտի լինի: Թէ զիւղի մէջ զանուում ըրտնզէ իրերը և թէ բազմաթիւ աների հետքերն արդէն ապացոյց են, որ թէ շատ վազ ժամանակից և թէ բաւական մեծ բնակութիւն է եղել այստեղ: Գիշեղից գուրս, զէպի Դուշչի-բիլաք տանող ճանապարհի վրայ ևս նկատեցի երեք համ կուրքաններ, որոնց պեղելու, զժրագզարար, ժամանակ չունեցայ:

Գիւղը տեղաւորուած է զիւռի աջ ափին և բաժանուում է երկու մասի՝ վերինը՝ հայկական, ներքինը՝ թրքական: Վերշինն աւելի հարթ և ընդարձակ աեղ է բանում, թէպէս և՛ իւր շինութիւններով, այնուամենայնիւ, ոգարմելի է թւում հայկական, առանձնապէս վերցրած շատ հասարակ, շինութիւնների առաջ: Երկու թաղերի գրեթէ սահմանագծում, փոքրիկ հարթութեան վրայ բարձրանուում է մի հինուուրց, հասարակ եկեղեցից, որը վերանորոգել են և մօտի զեղեցիկ խաչքարը կանգնեցրել են կտրանը՝ արևմտեան պատիք մէջ տեղամէ, Եկեղեցու շուրջը կամ հին զերեզմաններ, հին խաչքարերով: Այստեղից փոքր ինչ բարձր մի պարտիզի մէջ քարէ պատուանդանի վրայ կանգնած է երեք արշինաշափ մի զեղեցիկ խաչքար՝ 1282 թուի արձանագրութեամբ:

Սակայն Հերհերի ուղագրաւ Ըստեթիւնները Ս. Միօն անտպատը և Ս. Գէորգայ մատուռն¹⁾ են: Առաջինը զանուում է զիւղից բարձր, զէպի հիւսիս, մի փոքրիկ բլրակի գագաթին, որի ստորոտով հոսում է մի յստակ առուակ: Այս փոքրիկ, երկու կից եկեղեցիներից բաղկացած անապատը, ինչպէս յետոյ կը տեսնենք, շատ հին է և շինուած է Սիմեոն Վարազդուխտ արկնութից: Շուրջը կամ մօտ երեսուններ, միքանի նորաքանդակ խաչքարերով, փոքր ինչ հեռու էլ մի ձիթահանք:

¹⁾ Ժազովուրդը ոյզ մատուքն այժմ կոչում է Զիջ վանց:

Ս. Գէորգի մատուռը զիւղի հարաւային ժայրումն է, մօս կէս վերստ հնուն, զետի ձախ ափին բարձրացած մի ապառաժութիրի զագաթին, շնուռած է 1247 թուին Շաշ միայնակեացի և իւր եղայր Մաթուխի աշխատութեամբ:

Գիւղի հանդէս, գէպի արելեկան կողմը բարձրանում է ապառաժութ, մի բարձր զագաթ, որ համարում է Գէօյ-դաղի մի ճիւղ: Սրա վրայ կայ մի փոքրիկ ամրոցի հետքեր, —պարիսապ և մի մատրաննան շինութիւն, մօտը երեք խաչքար, որոնցից մինչ վրայ կայ 1247 թ. արձանագրութիւն: Հաւանական է, որ սա լինի Վայոց ձորի Կապոյշ բերդը:

Այս զագաթից մի հանգին ժայռի կոռոր պլորուել է և հանդնել գիւղի հանդէս, որ այժմ Նախակելի են աների հետքեր: Այդ ժայռի վրայ կայ մի ընդարձակ արձանագրութիւն, որ գրել է 1143 թ. Գրիգոր կրօնաւորը¹⁾:

Հերէների բնակիչներից հայերը զալթած են Զանգեզուրի գաւառի Ալիւու և Նախակելանի գաւառի Զաների գիւղերից: Բացի սովորական ուրաքավունքից պանդիտում են Թիֆլիս և Բագու, մշակութիւն անելու: Ընդամէնը 50 տուն են. 315 ար. 302 իգ. իսկասին՝ 617 հոգի: Իսկ թուրքերը 97 տուն են, 393 ար. 399 իգ. իսկասին՝ 732 հոգի: Ալեքսան գիւղի բալոր բնակիչներն են 177 տուն, 708 ար. 641 իգ. իսկասին՝ 1349 հոգի:

Զնայելով որ գիւղի ամենալաւ վարելանողերը թուրքերի ձեռքն են, այնուամենային հայերը անտեսապէս նրանցից շատ լաւ են: Առաջները թուրքերը սաստիկ նեղում էին հայերին և շարունակ զողութեամբ ուրաքավում: Նրանց երկար ձողերի ծայրին երկաթի կեռ էին անցկացրել և գիւղեները աների հերթիկներից ներս էին կոյսում և պատահած իրը զուր հանում: Այս պատճառով էլ հայերը խնդրամատոյց եղան և 1902 թ. պահանդների պահակ հաստատեցին այստեղ:

Հերէներ գիւղից Յ վերստ գէպի հարաւ, այնտեղ, որտեղ Հերէներ չայը գործ է զալիս ժայռերի նեղ և խոր կրծքից և որտեղ վերջանում է Հերէների հարթավայրը՝ զրուած է Բուլախլար կամ Բէզզադա գիւղը, որի բնակիչները տեղաւորուած են Հերէներ չայի աջ և ձախ ափերին: Բուլախլար անունը այդ գիւղը ստացել է այն պատճառու, որ զիւղի վերևում, հիմսիսային կողմի ժայռից թափում են առաստապէս պատռական ազրիւներ, (թուրքերէն բուլախլար), իսկ Բէկկազա անունում է այն պատճառով, որ այստեղ բնակւում են թուրք բէկեր, որոնք իրանց ծագումը հաս-

¹⁾ Էն արձանագրութեան մասում: Վայոց անդամական մասում անդամական մասում:

առաջում են Ղարայուղու ցեղի Ֆաթալի խանից։ Այդ գիւղի աղբիւները հոչակաւոր են Դարալագեադում իրանց կարմրախայտ ձկներով, որոնք ձմեռները ներս են մտնում ու պահում ժայռերի մէջ ազրիւների ջրարաշխում, իսկ գարնան զուրս են թափում Հերհեր չայի մէջ։ Բուլախլարի բնակիչները 12 տուն են 80 ար. 60 իգ. ի միասին՝ 140 հոգի։

Բուլախլարից մօտ երկու վերսա զէպի հարաւ Հերհեր չայի աջ ափին, մոխրագոյն լեռների ստորոտում, փոքրիկ Կարթութեան վերայ գտնում է Արինչ գիւղը, որի բնակիչները ոչնչացնելով լերան լանջերը ծածկող անտառները, մերկացրել են և անտառների փոխարէն տնկել են ծիրանի ծառեր։ Արինչն ունի 29 տուն թուրք բնակիչներ, 140 ար. 89 իգ. ի միասին՝ 229 հոգի։ Արինչից սկսած հովիտը հետագիտեաէ նեղանում է, և Հերհեր չայը կրկին սեղմուելով ու զրեթէ անհետանալով ճորերի և ժայռերի մէջ՝ հոսում է մօտ 8 վերսա տարածութեամբ և թափում Արգաչայի մէջ։

Մալիշկայի հովիտ։ Այս գիննեաւ հովիտը ձգւում է դարձեալ հիւսիսից հարաւ, զրեթէ ուղղաձիգ, Հերհերի ձորանովակից 8—10 վերսա զէպի արևմուտք։ Հովտի միջով հոսում է Մալիշկու գետակը, որ բազկացած է երկու վտակներից։ Արգավիշ-չայ և Ղարավանքի-չայ, որոնք միանում են Մալիշկա գիւղից բարձր՝ Կարմիր-սար լերան ստորոտում։ Հովիտը շրջապատող լեռնային գագաթներից նշանաւոր են Աղ-գաղը, Մալիշկա գիւղի արևելեան կողմում, Կարմիր սարը, և Գանջի-մալլը։ Հրարխային խանձողի շեղակոյտեր և մասն կտորներ նկատելի են զրեթէ ամբողջ հովտում, մանաւանդ նրա հարաւային ծայրում, ուր գտնում է Մող քաղաքի աւերակները։

Հովտի հիւսիսային մասում կայ մի հին գիւղատեղի միքանի աղբիւներով, որի պատճառով և կոչւում է Բուլախլար (աղբիւներներ)։ Խեմային հարուստ բուսականութեանը նպաստում է նաև մեղուազառութեան, ուստի և սրա մօտակայքում պահում են մեղուներ մօտ 2 վերսա հեռաւորութեան վրայ գտնուող Արգանց գիւղի բնակիչները։ Արգավազը մի փոքրիկ, աննշան գիւղ է, զետեղուած մի չափազանց քարքարու սարի լանջին։ Սա հին Արկազ կամ Արկազն գիւղն է, որի մասին Ստեփանոս Օքքելեանը պատմում է, թէ 735 թուին սրա բնակիչներն իրենց տանուտէրի առաջնորդութեամբ զուրս եկան Մողում նահատակուած Ստեփանոս եպիսկոպոսի մարմինը զէպի թանահատի վանքը տանողների առաջ և ինդրեցին, և անգուցանել (մարմինը) ի սեննեակն, որ լանուն սրբոյն Քըիստափորի անյաղթ զօրավարի շինեալ էր»...

Նրանք էլ յարգեցին որանց խնդիրը և ապա, վայոց ձորի քառամսօրեայ պատուհանից յիշոյ, ողջ մնացած ընտկիչները հրաւիրեցին կաթուղիկոսին ու բազմաթիւ հոգևորականներ և տեղափոխեցին սորի նշանարկները Թանահատի վանքը:

Այժմնան գիւղը գեղեցիկ է իւր դիրքով ու տեսարանով, և զերպաննցում է իւր շնորհիւններով միւս թրբարնակ գիւղերից: Բնակիչները թուրքեր են, 45 տուն, 382 ար. 341 իգ. իմիսաին՝ 723 հոգի: Արա և Զուլի բնակիչները համարւում են Դարալագեազի թուրքերի մէջ ամենանարուսաց: Այս և Հերհեր գիւղում միայն կան մի մի մզկիթ, իսկ միւս բոլոր թրբարնակ գիւղերը զրկուած են աղօթաններից:

Արգեալի թուրք բնակիչների մեծ մասը Թանազայլու ցեղից են, որոնք աերել են Զանգեզուրի զաւասի Խընածախ գիւղի մեմբր Հայկաց կամ մելիքի էազ հայ մելիքի մահմեղականութիւն ընդունած որդիններից¹⁾:

Գիւղի ստորոտում, լեռնադաշտի վրայ բարձրանում է Արգեալի սուրբ Խաչ վանքը, ուր սուրբ Խաչի տանին ահազին բազմութիւն է ուխա գալիս²⁾: Վանքի հարաւային կողմում նկատելի են հին շինութիւնների հիմնադրասեր և նոյն իսկ աւերակներ, ազրիւրի խողովակներ, և ըլլի վրայ մի սրբատաշ քարից շինուած կիսաւեր եկեղեցի:

Ս. Խաչ վանքի արևմտեան կողմը, մօտ 2 վերստ հեռու, Մալիշկայի-գետակի երկրորդ վտակի ձախ ափին գանձում է Ղարա-վանը (սև վանք) գիւղը, որ իւր անունն ստացել է մօտի տափարակ բլրակի վրայ սև քարերով շինուած վանքից: Այս, թուրքերից Ղարա-վանը կոչուած, մենաստանը ժդ. դարում շինուած Թանահատի վանքն է, ուր ամփոփուած է 735 թ. Սոզում հանտակուած Ստեփանոս եպիսկոպոսի մարմինը:

Թուրքերի կիսագետնափոր, ողորմնիլի աներն արդէն շրջապատել են վանքը և քարերից շատերն տարուած են, որովհետ վանքը կիսաւեր է և անխնամ թողնուած:

Բացի վանքից գիւղում ուրիշ հետաքրքրական բան չկայ: Բնակիչները Թանազայլու թուրքեր են, որոնց մէջ կան չափազանց գեղեցիկներ, ընդամենը 25 տուն են, 156 ար. 142 իգ. իմրասին՝ 298 հոգի:

Ղարավանքից դէպի հարաւ, մօտ հինգ վերստ հեռու զալւում է Վայոց ձորի հայաբնակ ամենաբազմարդ գիւղը:—

¹⁾ Այս մօսին աեւ՝ Ազգարենիսթիւն զիւռում:

²⁾ Տես Եղանակը գուրերի մասուն:

Մալիշկան, որ տեղաւորուած է հովտի փոքր ինչ ընդարձակ մասում, համանուն զետակի ձախ ափին, Այստեղ սրանցելի են այն յորդարուղին և սառնորակ աղբիւրները, որոնք ժայթքում են ձորը ըրջապատող ժայռերի միջից, տեղ տեղ բանաստեղծական խոռոշներ կազմելով: Դիւղի հարաւ արևելեան կողմը, գեղի Այեար և Մող գիւղերը ծածկուած է խաղողի և պտղատու ծառերի ընդարձակ այգիներով: Դիւղի մէջ կան միքանի լայն փողոցներ և բաւականաշափ զեղեցիկ աներ և մի անշաք եկեղեցի: Դեռ ևս կանգուն են միքանիսը այն վաթուն կրպակներից, որ Դարալազեղի ոստիկանական շրջանի կառավարիչ Պետրոս Մազաթեանը կառուցել էր տուել 1857 թ. ամեն ջանք թափելով, որ այստեղ հաստատուի մշտական շուկայ և տօնավաճառ: Սակայն նրա ջանքերը իդուր են անցել: Դիւղից $\frac{1}{2}$ գ. հեռու, գեղի հիւսիս կայ երկաթա—ալկալեան ջուր:

Բնակիչները Սալմաստի Սաւերի և Սարամերիկ գիւղերից են, վայելչակաղմ, առողջ և մանաւանդ ճարպիկ մարդիկ, շատերը թուսաստան խաչաղողութիւն արած: Գրագիտութիւնը բաւական արածուած է, ունին պետական միջասեան դպրոց, ընդամենը 160 տուն են, 771 ար. 527 իգ. իմաստին՝ 1298 հոդի, Գլխաւորապէս պարապում են այգեգործութեամբ և զինեգործութեամբ. բացի հացահատիկներից, մասամբ ցանում են նաև չալտիկ և բամբակ: Մալիշկի գինին Արքիի գինուց յետոյ ամենալաւն է համարուած, և իւր գաւառին բաւականութիւն տալուց զատ՝ մեծ քանակութեամբ արտահանուած է Նոր-Բայազէտի գաւառը:

Հերեների և Մալիշկայի հովտաների միջև ընկած են հիւսիսում Նովլու, իսկ հարաւում Նովլար և Դայլախլու գիւղերը: Նովլուն մի աննշան գիւղ է, 23 տուն թուրք բնակչով, 140 ար. 115 իգ. ի միասին՝ 255 հոդի:

Նաւար գիւղում կան ջրի քարէ հնադարեան աւազաններ, թուրքերէն նաւեր, որից և յառաջացել է գիւղի անունը՝ Նաւար: Բնակիչները Խանաղայլու թուրքեր են, մեծ մասը բորոտութեան ախտով վարակուած: ընդամենը 20 տուն են, 83 ար. 60 իգ. ի միասին՝ 143 հոդի:

Դայլախլուն գանուում է Մող քաղաքի աւերակներից գեղի արևելահիւսիս, այն հարթութեան ծայրին, որ այժմ կոչուած է Փշադիւզ, թերևս Ստ. Օքքեւեանի յիշած Փշատիք գիւղի անունով: Ինչպէս տեսանք ¹⁾ սրա սահմանում գտնուում է Մոլթան քահասի կոչուած գիւղատեղին, որ յզկած քարի գարի մասորդ է: Աւելաց-

¹⁾ Տես պահմական տեսաքեսն մէջ:

նենք այսուեղ, որ այդտեղ գանռուած ծովային նստոյցքներից բարկացած ըլլիի մասին տեղական թուրք աւանդութիւնն առում է, թէ այդանոցի մի հորուսակ դրամներն են, որ քարացել են, որովհան նա մեզանչել է իւր հորազատ հարսի զէմ:

Բացի յդկառ քարի շրջանի վերոյիշեալ մասցարդներից, այսուղ կան նաև միքանի, վերջին ժամանակի հութիւններ, ինչպէս ներքին Դայլախուրի մօս գանռում է մի տափարակ քար, թերևս տապանագրար, վերան քանդակուած մի թագակիր կնոջ պատկեր, ձեռները գոտիի մէջ զրած: Սրա մօտ մի ժայռի կրծքին փորազըրուած է: Ես Մարզարէ քահանայս կանգնեցի զիսաչս և շինեցի զբաւարանն: ով կարգէք յիշեցէք: Սրա մօտ, յիրաւի, նկատելի են մատրան հետքեր, որ գիւղացիները բաց են արել և ուխտանիզ զարձել: Այսուղից էլ մի կես վերաս հեռու ժայռի մէջ կայ մի մեծ քարայր, ուր գեռ ևս մեռում է ձիթահանքի մի քար: Սրա շրջակայքում նկատելի են տների հետքեր:

Դայլախուր զիւղը բաժանուած է երկու մասի՝ Վերին և Ներքին, որ միմեանցից երկու վերստաչափ հեռու են: Վերինուու բնակուած են 13 տուն միայն հայեր, իսկ Ներքինուու երկու տուն հայեր և երեք տուն թուրքեր: Հայերը Ազատակ գիւղից են, այն գիւղի վրայ են ցուցակագրուած և ձմեռը այսուեղ են անցկացնուած:

Ալորու-շայ ճոր կամ Սրբզօնը.—Մալիշկայի ձորից արեւուք ձգուած է մի ուրիշ, փոքրիկ ձորակ, որի միջով հոսում է Դուրու-շայ զետակը, իւր անունը աւարով ձորակին, որ հոսունը Սրկզօնք էր կոչուած: Այս պատմական վայրի մասին ահա թէ ինչ է պատմուած Ստեփանոս Օքքելեանը: Վարդանանց նահատակութիւնից յետոյ մի փախատական գունդ կամենուած էր անցնել Արցախ ամուր աշխարհն, որի յետնից պնդեց անիծուած Աթաշենուզա կրտկապաշտը Պարսից չարահնար զօրքով և համելով ոի զաւառամէջն Պայոց ձորոյ, մերձ ի ըլուրն որ մեծամեծ վիմօք պատեալ էր զան ամրութեան, ի զետամիջին Եղեգեաց և Սոզան կոռուցին և կոսորեցին շատերին... Յետոյ պնդեցին միւաների յետնից և համելով նրանց կիսին մի բերգաքարի ստորոտում, մի նեղ ձորակի մէջ, նրանց ևս կոսորեցին: Արանց գլխաւորի անունն էր Սարտիրէ և տեղն էլ կոչուեց Անգեղձոր: Ապա տապատակ առնելով հասան 300 մարդկանցն էլ ոի ջրկիցն որ Ռստինը կոչի և Արտաքընը և այդ տեղ նրանց էլ խողխողեցին: Սրանց վերայ յետոյ տեղի բնակիչները եկեղեցի շինեցին... Առաջին սրբերը, որ ըլլի մօտ նահատակուեցան, իսկոյն ամփո-

փուեցանք քրիստոնեաների ձեռքով, բայց յետոյ, երբ Գիւտ կաթոլիկոսը լսեց այդ մասին՝ հրամայեց մի մեծ վկայարան շինել այդ սրբերի վրայ, «Եւ կատարեալ զնա մեծածախ զանձիւք կանգնեցին ճնմարան իմ երկնանձան հրաշաքարտար շինուածովք երկագմբէթս և եռախորանո. և յերկուց կողմանէ գաւիթս և սրահակո, վերնատունս սեամբք և սրանչելի յօրինուածովք շինեալ Եւ զայրն ամենայն ի մեծ զնոտյն մինչի վեր ի լեռնակողմն որ Սրբոնք կոչի, ընծայեցաւ ի ժառանգութիւն ո. եկեղեցւոյն պաշտօնէիցն»:

Բայց ժամանակի ընթացքում աւերուեց այդ շէնքը և ժդղարում տեղը գարձաւ շինանիստ և կոչուեց Խոտորայեղ¹⁾. Այժմ ամբողջ Դարրագեազուում ոչ Սրբոնք և ոչ Խոտորայեղ անունով զիւղ կամ աւերտկ յայտնի չէ, այլ այդ նկարագրուած վայրում կանգնած են Բաշքենտ, Օրգագենս և Թէշիշ-քենսա զիւղերը:

Բաշքենտ.—զետեղուած է այն ձորակի բնրանում, որ պառաժուտ ժայռերով և լեռներով եղբափակուած ձգուում է զէպի հիւսիս: Չորակի միջով հոսումէ Դուռու-չայը, որի ափերին բարձրանում են հարիւրամեայ սաղարթախիս ընկուզենիներ: Գիւղը բաւական բարձր գիրքի վրայ զտնուելով, թէ հիանալի տեսարան և թէ զով կլիմայ ունի, ուստի և յաճախ շրջանի սոստիկանի և այլ պաշտօնեաների համար իրը ամսաւանոց է ծառայում: Գիւղի շրջակայքում կան ութ գերեզմանատուն, սակայն ոչ մի գերեզման բրոնզի գարից: Գիւղի ծայրին, զարնոր ընկուզենիների ստուերի տակ զտնուում է Պոօշ իշխանի ապարանքի մնացորդները: Հոյակապ զոան կամարակալ քարը, որի վրայ քանդակուած է առիւծ և վազր, կտոր կտոր եղած ընկած է մի կողմ: Սրբատաշ, ահապին մեծութեան քարերը տարտած են և իրը գերեզմանաքար զործածուած: Ապարանքի հիմնապատերի վրայ զիւղական խճիթ է կանգնեցրած: Սրանից փոքր ինչ հեռու զտնուում է մի հին, հասարակ եկեղեցի ո. Յակոր անունով, որի հիւսիսային պատի մէջ կայ մի խաչքար ժդի. զարից:

Բաշքենտի ձորակը ուղղուելով զէպի հիւսիս երկուափ է բաժանուում և զրկուում մի բարձր, կանաճն լեռնաբլուր, մի ամբողի աւերակիներով, որ հնումը յայտնի է եղել Բոլորաթերդ, իսկ այժմ Պոօշի ընթի անունով, իսկ սրանից զէպի արևմուտք, փոքր ինչ հեռու, թէք-դոնդուրան լերան լանջին բարձրանուում է Սպիտակաւոր Ս. Աստուածածնի վանքը:

Բաշքենտի բնակիչները գաղթել են Սարմաստի Ալանիկ:

¹⁾ Առեք. Օրբելյան, պատմ. գլ. ժթ.

Հմբանուայ և Սաւրի գիւղերից, ընդամենը 61 տուն են, 677 հոգի որմանցից 319 արական և 258 իզական Առաւելապէս Սաւրեցիները սկզբներում խաչագողութեան, իսկ այժմ առևտրի համար գնալով Ռուսաստան, (առաւելապէս Արմաւիր) թէ հարստութիւն և թէ որոշ քաղաքակրթութիւն են բերած գիւղու Գրեթէ բոլորը գրագէտ են և ստանուած են մի քանի լրագիրները Գիւղում կայ մի ճոթի կրօպակի, 3 գերձակի և 2 մաշկակարի խանութ, մի գարբնոց, պարագաները ուղին է, միայն հողի սակաւութեան պատճառով մշակուած են մօտակայ Դարավանք թրթարնակ գիւղի հողերը կիսովի:

Օրդագրեանտ.—զանուած է Թեշիցքնու և Բաշքենստ գիւղերի մէջ տեղուած և այս պատճառով էլ կոչուել է օրթագենու—միջազգիւղ Նրկուսից էլ հետո է մօտ 3 վերստ: Գիւղը տարածուած է մի հարթագայրի վրայ, Առևուչայ գետակի ափին և զարդարուած է բարձր բարդիներով ու պատառու ծառերով: Այստեղ կայ մի հին եկեղեցի Հրեշտակապետաց անունով, շնուռած 1692 թուին, և մի մատուռ:

Գիւղի արևմտեան կողմում, գաշտավայրի վրայ նկատելի են մի հին ամրացի պարսպի և բուրգերի, ինչպէս և միջանի շէնքերի մնացորդներ: Այս տեղ կայ նաև մի խաչքար, որի վրայ եղած արձանագրութիւնից կարդացւում է միայն Զին թուականը (1316), Առանցաբար Վարդանի թերդ են անուանուած որան, առանց կարողանայու մի որնէ մանրամատնութիւն պատճել: Թէ այս թերզի մօտ և թէ գիւղի շրջակայքում, մանաւանդ հիւսիսային կողմում, կան հին գերեզմաններ՝ բարձր խաչքարերով, ժիշ—ժիշ դարերի տապանագրերով:

Գիւղի կլիման համեմատաբար դով է, ուստի և խաղողը լաւ չի համուած և զինին ամնքան լաւ չի լինուած: Բնակիչները պարսկանայիր են, Սոմայի գիւղից, վայելակազմ և առողջ, Ընդամենը 116 տուն են, 594 ար. և 482 բգ. Խմբասին՝ 926 հոգի: Բացի սովորական պարագաներով կարենած են այգեսպանութիւնը—բնակիչները վարելանողի և արօտատեղու սակաւութեան պատճառով մշակութիւն են անուած շրջակայ գիւղերում և քաղաքներում: Գիւղում կան երկու մանրավաճառի խանութ և 6 գրքար, որ լաւ թաղից են պարաբառում գառան բրդից, և մի պայտառ:

Օրթագենուից գէտի հիւսիս արևելք՝ ձորակի մէջ գտնուած է ժիշ—ժիշ դարերում միծահռչակ ֆայլաճոր կամ Գլամօր մննաւանը, որ այժմ Դարավանդը է կոչուու:

Քեշիշ-քեանտը տեղաւորուած է մի բարձրաւանդակի վրայ, որի ստորոտից հոսում է Առևուչայ առուակը: Բարձրաւանդակի

լանջից բղխում է մի ազրիւր, որ իսմելու ջուր է մատակարարում ամբողջ գիւղին։ Այս ազրիւրի ջուրը փոքր ինչ աղի է և անառողջարար։ Գիւղի հարաւային կողմում բարձրանում է մի բլուր, որի վրայ նկատելի են ամրոցի հետքեր։ Աւշագրաւ է պարսպի ահագին քարերը և միջանի գերեզմանքարեր հայերէն, արդէն եղծուած տապանագրերով։

Գիւղը գուրկ է կանոնաւոր փողոցներից, սակայն ունի բաւականչափ գեղեցիկ, երոպական ճաշակով շինուած տներ, փոքրիկ պարտէզներով։ Ամրոցի հանողէապ մի հարթութեան վրայ բարձրանում է հայոց եկեղեցին, որի պատերի մէջ կայ միջանի հին, գեղեցկաքանդակ խաչքարեր։ Կլիման համեմատարար տաք է։ Բնակիչները բոլորն էլ հայեր են, մի մասը Տաճկաստանի Աղքակ գաւառից, միւսը՝ Պարսկաստանի Սալմաստ գաւառի Տօրիկ, Ճուկեան և Դուազամ գիւղերից են։ ընդամենը՝ 155 տուն, 746 հոգի արական, 659 իգական, իմիսանին՝ 1405 հոգի, Պարապում են երկրագործութեամբ, այգեգործութեամբ և անասնապահութեամբ։ Յանում են նաև փոքր քանակով բամբակ և բրինձ, կանանց մէջ բաւական զարգացած է գորգագործութիւնը։ Գիւղում կայ երեք խանութ, երկու գարբնոց և երկու մաշկակարի արհեստանոց։ Բնակիչների մեծագոյն մասը աղքատ է, չնորհիւ այն հանգամանքի, որ միջանի տղորուներ իրենց ձեռքն են ամփոփել թէ հոգի լաւ և մեծագոյն մասը թէ առևտուրը։ Պարսկաստանից գաղթած օրից մինչև այժմ նոր հողարաժանումն տեղի չէ ունեցել։

Այս գիւղի մասին պատմական աեղեկութիւններ չկան։ Ժողովուրդը աւանդաբար ասում է՝ թէ գիւղի հին անունը Տանձաթաղ է եղել, իսկ հայր Ալիշան ենթագրում է թէ սա Փոնձաթաղն կարող է լինել¹⁾։

Գիւղի արևելահարաւային կողմում, Նուռու-չայի ձախ ափին գտնուում է մի գիւղատեղի, երկու մատուռներով, որոնցից մինը զրեթէ ամէն կիւրակի ունենում է ուխտաւորներ շրջակայ գիւղերից։

Ալագեազի ճոր կամ Ծղեգնամորը։ Ալագեազի ճորը Դարալագեազի շրջանում Արփաչայի ձորից յետոյ ամենաերկար և ամենահետաքրքրական ձորն է։ Նա գեղեցիկ է ոչ միայն իւր սքանչելի տեսարաններով, այլ և իւր հոյակապ հնութիւններով։ Նրա միջից հոսում է համանուն գետը, որ սկիզբն է առնում Դարալագեազի հիւսիս-արևելեան կողմում բարձրացող Սողանլուի և

¹⁾ Ալիշան, Միասիս եք. 124 և 128.

Դիւզալ-դարայի լեռներից. Նախ հոսում է դէպի հարաւ, ապա Զանի գիւղի մօտ թեքում է դէպի արևմուռք, և ապա Ալագեապի մօտ կրկին թեքում դէպի հարաւ և Դըզըլ-դշլադ գիւղից փաքք ինչ արևելք թափում Արփաշայի մէջ, Ալագեապը ընդունում է բազմաթիւ վատկներ առաւելապէս աջ կողմից, որոնցից նշանաւոր են Այստու-չայը, Երգափինի-ջուրը, Սալլու-ջայը և Հորսի-ջուրը: Ալագեապի ձորի ձախ ափը մեծ մասամբ պատաժ է ուղղանայինց ապառաժներով: Կիյման հիւմիսում բաւտկան բարեխան է, միայն հարաւում համեմատաբար տաք: Մրա համեմատ և հիւմիսում աիրում է ալպեան բուսականութիւնը, իսկ հարաւում համեմատ խաղող:

Զորք իւր անունն ստացել է իւր ամենանշանաւոր Ալագեապ կամ Եղեղիս գիւղից, որ Միւնեաց Վասակեան հարստութեան մայրագաղաքն է եղել:

Զորք ամենանհիսիսային մասում զնտեղուած է Գեագուկ-վանք կամ Ղողուղ-վանք թրբարնակ, փոքրիկ գիւղը, 28 տուն բնակչով, 102 ար. 98 իգ. ի միասին՝ 200 հոգի:

Դիւզում կայ երկու փոքրիկ, կից եկեղեցիներ, առանց խորանների, մինչ սրբատաշ, կապոյտ, իսկ միւսը հասարակ քարից շինուած: Երկուն էլ կիսաւեր են և անասնոց ազրով լցուած: Դուն կամարակալ քարի վրայ, որ այժմ վրայ է ընկած, զրուած է. թզ. չ. 2ի: Այստեղից փոքր ինչ հեռու կայ երեք հին գերեզմանատուն և միքանի աւերակներ:

Այս տեղից փոքր ինչ հարաւ, մի ուրիշ առուակի վրայ գըրուած է Ղարաղայա նոյնպէս փոքրիկ, թրբարնակ գիւղը, 30 տուն բնակչով, 110 ար. 92 իգ. իմիասին՝ 202 հոգի: Այստեղ ևս կան հայկական հին գերեզմանատուն և միքանի աւերակներ:

Այստեղից էլ արևելահարաւ գանեւում են Զլունի գիւղերը, զերին և ստորին: Վերջինն կոչւում է նաև Ղարախու-Զանի: Երկուսումն էլ կան հայկական աւերակ եկեղեցի և գերեզմանատուն: Ղարախու-Զանին փոռուած է լեռնագաստի վրայ և բաւական գեղեցիկ տեսքը ունի, զարգարուած լինելով բարձր բարզիներով: Այստեղ ձորի մէջ նկատելի են մի հին, միակամար կամուրջի հիմնապատեր, որի վրայ այժմ ձգուած են հասարակ գերաններ: Կամուրջի հանդէպ, քարաժայուի զագաթից թաւլըւում է մի սրանչելի լրջնից, որից մօտ մի վերստ հեռու, բարձրաւանդակի վրայ կանգնած են մի հինաւուրց տան աւերակներ, որի մասին տեղական աւանդութիւնը պատմում է թէ պատկանելիս է եղել մելիք Զանի հայ իշխանին, որ երկար պատերազմներ է վարել Պարսից դէմ: Վերին-Զանին ունի 27 տուն թուրք բնակիչ, 114 ար. 92 իգ.

միասին՝ 206 հոգի, իսկ Ղարախոլու-Ջանին՝ 55 տուն, նոյնապէս թուրք, 282 ար. 275 իգ. միասին՝ 457 հոգի:

Այստեղի կանայք շատ լաւ կապերտներ և գորգեր են գործում: Երկու Ջանիների մէջ ընկած են երկու Գիւլի-դիւզ (վարդի հարթ) թրքարնակ զիւզերը, որոնք իրենց անունն երկի տացել են երբեմն վարդերով պատած այս զաշտից, ուր այժմ թրքական խրճիթների կողքին գեռ ևս մուռ են հին եկեղեցու աւերակները և սրբատաշ խոչքարեր մ՞Դ—մ՞Զ. գարերից Բնակիչները 31 տուն են, 120 ար. 100 իգ. իմիասին՝ 220 հոգի:

Գիւլի-դիւզից դէպի արևմտաք ձգւում է մի ձորակ, շրջապատուած մնեկ, ապառաժուար ըլուրներով: Հիւսիսային մասում մի բլրակի երկու կողմից հոսում են յորդ ազդիւրներ, որոնք միանալով կազմում են մի թերակզբի: Թէ ձորակը և թէ նրանից բարձր սարահարթը պատած են ծառերով: Կիման բաւական մեղմ է և հաճելի, ջուրը յստակ և սառն: Անա այստեղ տեղատուած է Այսասի թրքարնակ զիւզը իւր ողորմելի խողերով:

Բլրի զագաթին բարձրանում է Արտօտէսի հոյակապ վանցը իւր շուրջը ունենալով այս աւեր խցերը, ուր մի ժամանակ սաստիկ շողուց ապաստանում էին Նորավանքի միաբանները¹⁾:

Այսասիի բնակիները զրեթէ բոլորն էլ սէիստներ են—Մահմէդի զարմից—որոնք սիրում են ոչ թէ իրենց աշխատանքով, այլ հաւատացեալիների տուրքերով ապրել, և որովհետ այս տուրքերն այնքան առատ չեն, ուստի սրանը սաստիկ աղքատոթեան մատնուած՝ գողութեամբ են պարապում: Ուշագրաւ է այս փաստը, որ երբ են կամենալով զիւզից փոքր ինչ բարձր մի կուրգան պեղել տալ, տանուտէրից մարդիկ պահանջեցի, մի բոպէում մօտ յիսուն մարդ վագեցին եկան, —այնքան մեծ էր անգործների թիւը, սակայն զիւզում միմիայն մի բրիչ (քուլունկ) կար, և սրանը այնքան թոյլ և անշնորնք էին, որ վեց ժամից յետոյ ես ստիպուեցայ կիսատ թողնել պեղումը և հեռանալ: Տանուտէրի փոքրիկ որդին միմիայն մի շապիկ ունէր, կեղտից սևացած և տասնեակ տեղից պատառուած: Ընդամէնը՝ 39 տուն են, 109 ար. 91 իգ. իմիասին 200 հոգի:

Հովտի վերջաւորութեան վրայ, ուր Այսասի զետակը միանում է Ալագեազի գետակի հետ, գրուած է Շատուշուղ թրքարնակ զիւզը: Սա հաւատորէն էին Գրկից զիւզը պիտի լինի: Բնակիչները 27 տուն են, բոլորն էլ թուրքեր, 110 ար. 90 իգ. իմիասին 200 հոգի:

¹⁾ Տես հշտակը գոեցերի մասն:

¹⁾ Տես հշտակը գոեցերի մասն:

Նոյնագուն աննշան է նաև այստեղից փոքր բնչ հիւսիս-արևմուտք, մի անտառապատ լերան լանջին զհակուած Դալասար թրքարնակ գիւղը, ուր նոյնագուն կայ մի եկեղեցու աւերակ և գերեզմանատուն։ Բնակիչները 24 տուն են, 50 ար. 40 իդ. ի միամին 90 հոգի։

Դառչաւզից երկու վերստ գէպի արևմուտք, Ալագեազ գետի աջ ափին, զրուած է Գիւնչյ-վանք թրքարնակ աննշան գիւղը՝ 15 տուն բնակչով, 50 ար. 40 իդ. իմիասին 90 հոգի։

Սրբ մօս, լերան լանջին գեռ ևս մեռում են Կոչվանքի հոյակապ, կիսապրծան եկեղեցիների խցերը, ինչպէս նաև մի ջրազաց փաքր բնչ ներքն, որի 4 սաժէնանոց նոււը բաղկացած է երկու կտոր քարից։

Գիւնչյ-վանքից գէպի արևմուտք, Ալագեազ գետի աջ ափին, 3—4 վերստ տարածութեամբ սփռուած են նախկին Սղճգիս քաղաքի աւերակները, միքանի հոյակապ եկեղեցիներ, բազմաթիւ հրաշտկերու խաչքարեր, տների, ձիթանացի աւերակներ և այլն, որոնց մասին ամենայն մանրամասնութեամբ խօսելու հմտշանաւոր վանքերի նկարագրութեան մասում։ Այժմ միայն կասեմ, որ այդ հինաւուրց մայրաքաղաքի աւերակների վրայ զետեղուած է Ալագեազ անուամբ մի թրքարնակ գիւղ, չպարունակելով իւր մէջ թրքական, յիշատակութեան արժանի որևէ բան։ Բնակիչները բուլորն էլ թուրքեր են, 49 տուն, 240 ար. 160 իդ. իմիասին՝ 400 հոգի։

Ալագեազից գէպի հիւսիս-արևմուտք, մի սիզաւէտ լերան լանջին կանգնած է Աղջա-վանք կոչուած մենաստանը, որ հին Յախացքարն է, այժմ կիսաւեր և անինամ թողնուած¹⁾։

Այժմնան Ալագեազ գիւղից փոքր բնչ արևմտահիւսիս բարձրանում է Ամբաւտայ ըերդը²⁾, իսկ արևմտահարաւ, Եղեգիսի աւերակների մօս, Հոստուն գիւղը, որ Ռստինըն է եղած։ Այստեղ կայ հայկական մի կիսաւեր եկեղեցի, մի Ծնդարձակ զաթով, առանց մի որն է արձանագրութեան։ Բնակիչները բուլորն էլ թուրքեր են, 15 տուն, 52 ար. 50 իդ. իմիասին 102 հոգի։

Հոստունից փոքր բնչ հարաւ Ալագեազ գետակի հետ խառնում է Գիւմուշ-քուլախ ծառազարդ վտակը, որի հովտում գըմնում են Ծրդագիխն և Հորքաղը գիւղերը։

Առաջինը՝ հին Արտաքոյնք գիւղն է, զետեղուած Գիւմուշ-քուլախի աջ ափին, և զարդարուած բազմաթիւ բարդի և պտղա-

¹⁾ Ցեղանաւոր վանքերի բաժնեւմ։ միանալ պատճենած ոչին

²⁾ Ցեղանաւոր թերգերի բաժնեւմ։ որ վեհական լուս է հայոց

տու ծառերով ու խաղողի այգիներով։ Դիւղի մէջ կան բաւական վայելուչ, պատշաճամբաւոր աներ, երկու խանութ, և մի փոքրիկ քարաշն մասուու։ Բնակիչները զաղթականներ են Պարսկաստանի եոյ զաւառի Խոյանայ գիւղից, ընդամէնը 47 տուն են. 320 ար. 280 իգ. իմիասին՝ 600 հոգի։

Միւս գիւղը՝ Հորբաղըղը գրուած է սարալանջի վրայ, և շատ գեղեցիկ տեսք ունի, թէպէսմ իրքի թրքական զիւղ, կեղտու է և կարգին շինութիւններից զուրկ։ Դիւղի հիւսիսային կողմում կան երկու գերեզմանաւուն, աների հիմնագարեր և մի ձիթաւանքի քար իւր կիսաւեր պատերով։ Դիւղի մէջ ևս կայ մի կիսաւեր, հասարակ եկեղեցի, որ ինչպէս երևում է առաստաղի կամարի արձանագրութիւնից, շինուած է 1692 թուին, Պարրիէլ և Միքայէլ հրեշտակապեսների անունով։

Բնակիչները բոլորն էլ թուրքիր են, 48 տուն, 349 ար. 328 իգ. իմիասին՝ 670 հոգի։

Հորբաղըղի և Երդափինի միջում, հովար մէջ, կան երկաթաշրի աղբիւրներ, որոնցից զբեթէ ոչոք չի օգտուում։

Հոստունից 4 վերսա արևմտահարաւ, Ալազեազ գետի ձախ ափին, զանուում է Հասանի-գիւղը կամ Հասան-թեանդը։ Սա այսպէս է կոյւուլ այն պատճառով, որ այժմեան հայ ընակիչների գալուց առաջ Հասան անունով մի թուրք այստեղ գոմեր է ունեցել։ Դիւղը զետեղուած է ձորի թեք լանջնն, որից բարձր ցցւում են ապառաժուս գագաթներ, իրենց մէջ պարփակելով Շատինի վանքը¹⁾։ Դիւղի մէջ կայ մի շատ հասարակ, փոքր եկեղեցի, ուրիշ ոչ մի ուշագրաւ շէնք։ Գետի աջ ափին տարածուում են խաղողի այգիներ, սեխի, վարունգի պարտէզներ։ Այսուղ տարածուած է նաև մեղուապանութիւնը։ Բնակիչները զաղթել են Պարսկաստանի Սումայի գաւառակից, ընդամէնը 43 տուն են, 290 ար. 305 իգ. իմիասին 595 հոգի։

Հասանի գիւղից մատ 2½ վերսա գէպի հարաւ, մի փոքրիկ բլրակի վրայ, կիսաւեր զրութեամբ կանգնած է սրբատաշ քարից շինուած մի շատ փոքրիկ մատու, որին ընիկ հայերը Ընգեղի մատու են կոչում²⁾։ Շատ հաւանական է, որ սա լինի հին Անգեղ-ծորը, ուր Աւարայրի ճակատից յետոյ Պարսից զօրքի հալածանքից փախչող հայ զօրքերից մի խումբ նահատակուեց իւր Մարտիրէ զօրապեսի հետ³⁾։

1) Տես՝ նշանաւոր վանքերի մատում։

2) Օրբելեան ժթ. գլ.

3) Այս մատուի մասին պատմում են, իրը թէ այգտեղ թաղուած է մի հայ աղջիկ, որ միայնակ մատակայ անտառը զնալիս

Հասան-քեանդից 6 վերստ հարաւ գանուում է Ալիխան-փայտ-սի թրքարնակ մի ամնաշան փոքրիկ զիւղ, որ այսպէս է կոչւում, որովհետև մի ժամանակ այդտեղ են գտնուել Ալիխանի գոմերը (փայտափ): Բնակիչները 11 տան են, 72 ար. 62 իգ. իմբասին՝ 135 հոգի:

Ալիխան-փայտի գիւղից փոքր ինչ ներքեւ, գետի վրայ բռնուում է միակամոր մի կամուրջ, որ թէպէս Մատուրի կամուրջ է կոչւում, ասկայն շինել է Շատինու վանքի առաջնորդ Սարգիս վարդապետը 1666 թուին, ունոնուութեամբ 90 միարանից և բազում ողորմութեամբ ժողովրդեան (1):

Այս կամուրջից էլ ներքեւ գանուում է այս հովտի վերջին գիւղը՝ Ղոյթուլ. — տարածուում է Ալազեագ-գետի աջ ափին բարձրացող փոքրիկ բարձրաւանդակի վրայ, Թեղշընատից 3 վերսա գէպի արեմուտք: Դիւզում կայ մի հասարակ եկեղեցի: Կիման բաւական տող է: Բնակիչները պարսկահայեր են Սոմայից. ընդամենը 115 տան. 657 ար. 431 իգ. իմբասին՝ 1088 հոգի: Առաջները մեծ մասամբ ցանուում էին բամբակ և չալթուկ, բայց երբ Բաշ-Նորաշչնից գէպի Նոր-Բայազէտ տանող ճանապարհը այս գիւղի մօտք անցկացրին, սկսեցին բացի այգեգործութիւնից ու զինեզործութիւնից, պարտիզանութեամբ ևս պարապել և առաւելապէս սեխ ու ձմերուկ ցանել, որ մեծ մասամբ սպառուում են Նոր-Բայազէտի գաւառում: Այս գիւղացիների անտեսական դրութիւնը փոքր ինչ լաւ մինչև պանդխառներ քիչ են լինում, դպրոց էլ չտնեն, ուստի և մտաւոր պարզացումը շատ զանգազ է յառաջ գնում: Գրագէտներ չափազանց քիչ են: Գիւղում կան երկու խանութեւ և մի բամբակ մաքրելու գործարան: Դիւզը կալուածատիրական է, պատկանում է Զիվա գիւղի թուրք Վելքիլովներին. — Ամբողջ Դարալազեազի գաղթական հայերի գիւղերի մէջ ու միակ գիւղն է, որ կալուածատիրական է:

Սելիմի—ծոր.—Հասանի գիւղի մօտ Ալազեագ գետին խառնուում է որս ամնամեծ վտակը, որ կոչւում է Սելիմի-զետակ: Սա սկզբուն է առնուում Ասինչ բարձրաւանդակի գէշերից, և ըն-

երթարկուել է թուրքերի յարձակմանը: Զկամննալով նրանց ձեռքն ընկնել, նաև այդ մատրան անզում անձնասպանութիւն է գործել: Մի ուրիշ աւանդութիւն էլ ասում է, թէ այդտեղ թագուած է մի թուրք երիտասարդ: որ քրիստոնէութիւն ընդունելու պատճառով նահատակուել է թուրքերից:

(1) Կամբէջ վրայի որձանազբաթիւնից, որ կարդացել է ո. Քաջերանին, Փաք. 1879 Խ. Ա. եր. 49

գունում է իւր մէջ բաւականաշափ վտակները: Թէ Սելիմի զետի և թէ սրա վտակների ուղղութեամբ ձգւում են փոքրիկ և նեղ ձորակներ, ուր զետեղուած են միքանի թրքարնակ և 2 հայարնակ զիւղերը: Ըսդհանրապէս բարձրազիր և ծառազարդ լինելով՝ այս ձորերը չափազանց գեղեցիկ են: Թէ գեար և թէ ձորակը կոչւում են այն «Տանուուեր» Սուլեմի անունով, որ շինել է համանուն բերդը¹⁾ սոյն ձորի հիւսիսային սահմանում, զետակի ձախ ափին ցցուած քարածայոփ վրայ²⁾: Արանից փոքր ինչ բարձր, 8001 սոնաշափ բարձրութիւն ունեցող մի բարձրաւանդակի վրայ կիսաւեր կանգնած է Սելիմի կարաւանատունը³⁾ այն ճանապարհի կողքին, որ տանում է Վայոց ձորից Գեղարքունիք: Այս հոյակապ շինքը շինել է իշխանաց իշխան Սմբատի որդի Զեսարը 1332 թուին:

Սելիմի կարաւանատոնից գէպի հարաւ, Զան-դուրդարան լերան ստորառում, Դոշա-գեօլ լճից սկիզբն առնող վտակի եզրին, գտնուում է Աղ-դէրէ գիւղատեղին Այստեղից դէպի արևելահարաւ, Սելիմի գետակի աջ ափին, մի հարթութեան վրայ փռուած է Աղքեանդ գիւղը, ուր նկատելի են հայկական եկեղեցու հիմնապատեր. իսկ փոքր ինչ հիւսիս, զետակի ձախ ափին, տարածում է մի ընդարձակ գերեզմանատուն, և սրա մօտ բարձրանում է մի սրբատաշ, կամարակառ, կիսաւեր կարաւանատուն: Դիւղը այժմ պատկանում է Նախիջևանցի Հայինազարեանին: Խակիշները թուրքեր են, 103 տուն, 420 ար. 350 իգ. իմիասին 800 հոգի: Դիւղից դէպի արևելք գտնուում է նաւար կամ Ռասուլ-Ղազաղի անունով մի գիւղատեղի:

Աղքեանդից դէպի հարաւ, նոյն զետի վրայ գտնուում է Թօմրաթուն հայարնակ գիւղը, 34 տուն ընակչով, 190 ար. 180 իգ. իմիասին 370 հոգի: Բոլորն էլ գաղթած են և ոյի Նօրուդ գիւղից:

Թռութունից դէպի արևելահիւսիս, մի ուրիշ վտակի վրայ տեղաւորուած է Թարազլուիս գիւղը, որ շատ գեղեցիկ տեսք ունի: Գիւղում հետաքրքրական տռանձին բան չկայ, միայն գիւղից 3 վերսա դէպի հիւսիս կայ մի կիսաւեր եկեղեցի, որ մի կերպ վերանորոգել են և ուխտատեղի գործքել Թուլիս-Մ'անուկ անունով: Սրա մօտ կան բաւականաշափ գերեզմանազարեր քջ. զարի տապանագրերով: Այս տեղից փոքր ինչ հեռու, ձորակի մէջ, նկատելի է մի հին գիւղատեղի, որ այժմ կոչւում է Քալլա: Այստեղից էլ

1) Օրբելեան, Ա. հատ. զլ. Գ.

2) Տես նշանաւոր բերդի մասում:

3) Մանրամասն նկարագրութիւնը տես հաղորդակցութեան ճանապարհներ գլխում:

արեւելք, մի բարձրաւանդակի վրայ փռուած է մի գերեզմանատառն, ուր մնում են ուրբ Մամասի վանքի միմիայն հիմնապատճերը:

Մի ուրիշ զիւղատեղի էլ աւերակ եկեղեցիով, տապանաքարերով ու խաչքարերով զանուում է Քարագլուից դէպի հարաւ, գետի աջ կողմում, և այժմ կոչւում է Ղարազուզէյ:

Քարազլիի բնակիչները հայեր են, Խոյի Մահլազան և Ղորուկ զիւղերից զաղթած, ընդամենը 62 տուն, 513 ար. 433 իգ. իմիասին՝ 946 հոգի: Պարապում են առանցապէս երկրագործութեամբ, մասամբ և այգեպանութեամբ, մասամբ և այգեպանութեամբ, թէպէս և խաղողը լաւ չի համուում:

Քարազլիից գէպի հարաւ, երկու վտակների միախառման մօտ, մի բլազի վրայ կանգնած է երեք արշին բարձրութեան մի խաչքար, 1290 թուից Խորիշանի որգի Սարզի դուստր Թացիկի բարեխօսութեան համար: Սրա ստորոտում, վոք ինչ արեւլահարաւ տարածում է Սալլի զիւղատեղին և սրա մօտ համանուն թրբարնակ զիւղը: Թէ այս վերջինում և թէ սրանից փոքր ինչ հարաւ զանուող Շահ-զեալզի Նշաղում ոչ մի ուշազրաւ բան չկայ: Առաջնի բնակիչներն են 59 տուն թուրքեր, 393 ար. 307 իգ. իմիասին՝ 700 հոգի, միւսինը՝ 15 տուն, 90 ար. 64 իգ. ի միւսին՝ 154 հոգի:

Վերջին զիւղից գէպի հարաւ, մի ձորի մէջ, կայ մի զիւղատեղի Վախսէ անունով, իսկ գէպի արևմտաք, մի ուրիշ ձորում Հորս գիւղը: Վերջինս Օրբելեանի ցուցակում յիշուած Հորբը պիտի լինի: Գիւղում կայ մի փոքրիկ, սրբատաշ եկեղեցու աւերակ, տապանաքարեր, խաչարձաններ, և որ ամենից հետաքրքրականն է, մի, գեռ ևս կանգուն, հին առևն, որի մասին տեղական ուստիցութիւնն ասում է, թէ պատկանել է Սելիմայ զգեակը շինող Զեսար իշխանին: Տունը բազկացած է եզել մի սենեակից և մի սրանից, որ այժմ բոլորովին քանդուած է: Սենեակը դեռ ևս կանգուն է, և այժմ մի թուրքի բնակարան: Շինուած է սրբատաշ քարից, 11 արշին երկարութեան և 9 արշին լայնութեան: Արեւլեան պատի մէջ բացուած է մի կամարակառ, բարձր և լայն դուռ, որի երկու կողմումը, ներսից, կան չորսական կամարակառ պարհաններ, միմեանց վերև: Սրա հանդէպ, արևմտեան պատի մէջ, բացուած է մի սաքռու, այսինքն 4 արշին երկ. 2½ արշ. լայնութեան և տան յառակից մի արշին բարձր խորշ, որի գէպի սենեակը քարձուած կողմը ամբողջովին բաց է: Սենեակի հիւսիսային պատի մէջ տեղուած կայ մի բուխարի, իսկ երկու անկիւններում մի մի թռնիր: Ցառակի մէջ նկատելի են չորս սրմասիւններ,

որոնց վերայ, անջուշտ, բարձրացած են եղել սիւներ՝ կրելու փայտածածկ կտուրը, Այս ձեմ աներ այժմ էլ պատճռում են Ախալքալաքի և Ախալցխայի կողմնութեամ:

Հորոի քնակիչները բոլորն էլ թուրքեր են, 125 տասն, 524 ար. 498 իզական, իմիասին՝ 1022 հոգի:

Սուլիմայ ձորում յիշատակութեան արժանի մնում է նաև Զիբուխեօրփի կամուրջը, որ ձգում է Սելիմի գետակի վրայ՝ նրա Ալագեսպի հետ խանութելու տեղից փաքր ինչ բարձր, Այս կամուրջը միակամար է, որքատաշ քարից և շատ հին: Սրա մասին արձանագրուած է մի տաճն քայլ հեռու, բլրակի ստորոտում կանգնած երկու խաչքարերի վրայ, սակայն շինողի անունը թուականը, ինչուած են:

Աղանածոր.—Հաճիստամուի կամ Ղոյթուլի ձորից արեմուաց, բայց նոյն ուղղութեամբ, հոսում է մի փոքրիկ վտակ, ոկիցըն անելով Վանքիդիւզ կոչուած սարահարթից, Այս վտակը այժմ կոչում է Ըղնաձորի ջուրը: Սրա ակունքների մօտ, սարաւանջի մի փոքրիկ, տափարակ տեղում տեղաւորուած է Աղանածորի գիւղը, որ տեղացիներից Լզնաձոր, իսկ թուրքերից Այնազիւր է կոչուում: Գիւղի մէտեղում կայ մի մեծ, բայց հասարակ եկեղեցի, մօտը գերեզմանատում, մի քանի հին տապանաքարերով: Գիւղը թէպէտ և հին է համարւում, սակայն ոչ մի հոսութիւն չունի: Գիւղից երեք վերստ գէպի արևելք կայ Արանայ գիւղատեղին, որ հաւանականորէն Օրբելեանի յիշած Ապանայ գիւղը պիտի լինի: Մրանից էլ գրեթէ նոյնքան հեռու, գարձեալ գէպի արևելք, նկատելի է Ղըզ-ղալա բերդի հիմապատերը, որի ստորոտից մի առուակ անցնելով միանում է Ըղնաձորի ջրի հետ: Այս առուակի ջուրը բղխում է այն ջրուրներից, որ փորուած են հոսում առուակի աջ ափին և որոնք այժմ ես նկատելի են: Այստեղից էլ հարաւ զանուում է Քեանիլիկ-բուլաղ կոչուած աղբիւրը, որը, թերեւ, մնի Օրբելեանի յիշած Կաքաւուց աղբիւրը:

Աղանածորից վեց վերստ գէպի հարաւ, հին ճանապարհի վրայ գետ ևս մնում են սրբատաշ, մօխրագոյն քարից շինած կիսաւեր կարաւանատունը, 40 արշ. երկարութեան և 18 արշ. լայնութեան, կամարակառ, և երեք մասի բաժանուած:

Աղանածորի կլիման, չնորնիւ իւր բարձր գիրքի, բաւական մեզմ է, ուստի և այստեղ ամառանոց են գալիս Բաշ-Նորաշէնից զաւառազետը և այլ պաշտօնեաներ: Սրանց ազգեցութեամբ գիւղում շինուած են միքանի գեղեցիկ աներ, և տնկուած են բաւականաչափ ծառեր: Ինակիչները բնիկ հայեր են, բացի միքանի



Femmes labourant le lit desséché d'une Կանաք վայով են շուտարժ զեփ ենի, *Крестьянки всекахиают русло вы-*
rivière pour faire venir la pluie. առվեսի ամերև զայ:

сохнаго ручая чтобы пошел дождь.



տուն պարսկակայերից. ընդամենը 74 տուն. 450 ար. 530 իշ. իմբասին՝ 980 հոգի.

Ազաւանաձորից գէպի արևելահարաւ անդաւորուած է Նամազավարիկ գիւղը 37 տուն քուրդ բնակիչներով, 120 ար. 152 իշ. իմբասին՝ 272 հոգի. Սրանց գլխաւոր պարագմունքը գողութիւնն է; թէ Ազաւանաձորը և թէ Նամազավարին պատկանում են շաշեցի թառութեաններին:

Էլփինի ծոր.—Պատմական յիշատակարաններով հչ այնքան շանաւոր այս ձորը ձգւում է համանուն գետի ուղղութեամբ, որ սկիզբն է առնում զլխաւորապէս Դիդ-վանք և Ղարա-Դայր լեռներից, և ընդունելով միքանի գտակներ, առաւելապէս ձախ կողմից, թափում է Արփա-Հայր՝ Արփա գիւղի հանդէպ: Թէ գետը և թէ ձորը իրենց անունն ստացել են Էլփին գիւղից, որ հաւանականորէն Օրբելեանի յիշած Ապողէն զիւղը պիտի լինի, հետեւպէս և թէ գետը և թէ ձորը կարեիր է կոչել նաև այզպէս:

Էլփին գետակի ամենամեծ օժանդակ Լոզյրճա-շայրի ակունքների մօս տարածում են հիանալի արօտատեղիներ, ուր ամառները սոր են գուրս գալիս Ազաւանաձորի և Ռինտի բնակիչները, չինց այս արօտատեղիների մօս էլ գտնում է հին Ռինդ կամ Ըսեղի գիւղի աւելակները, որ այժմ յայտնի են հւզգիւրդ անունով. Այս աւելակների մէջ նկատելի են մի եկեղեցու հիմնապատեր, և մի արձանագրութիւն, որից երևում է, որ տաճարը կոչվում է ս. Մտեփանոս և որ 1292 թ. իրկու եղբայրներ նուիրել են նրան իրենց Հայրենական հողը. Այստեղից մօս մի վերսագէպի արևելք, մի գորբրիկ հարթութեան վրայ կանգնած է մի կիսաւեր, փոքրիկ եկեղեցի և Աստուածածնի անունով: Պատերի վրայ կան միքանի արձանագրութիւններ ժդ և ժդ. գարերից, նկեղեցու շուրջը կան միքանի տապանաքարեր և փոքր ինչ հեռու տների աւելակի նկեղեցու կանգնած տեղը այժմ կոչվում է Վանքի-վիւզ: Այստեղից գէպի արևելահարաւ գտնում է Ազաւանաձորը, իսկ գէպի արևմտահարաւ. Լոզյրճան, 57 տուն թուրք բնակչով, 369 ար. 392 իշ. իմբասին՝ 760 հոգի: Թէ այստեղ և թէ որա մօսի Ռինդ գիւղում յիշատակութեան արժանի գրեթէ ոչինչ չըկայ: Վերջինին բնակիչները բնիկ հայեր են, 43 տուն, 283 ար. 218 իշ. իմբասին՝ 501 հոգի:

Էլփին գետակի և սրա մանը վտակների վրայ սփռուած են փոքրիկ և աննշան թրքաբնակ գիւղեր, որոնց մէջ միակ, ոշագրաւ հնութիւնը մի հասարակ եկեղեցու հիմնապատերն ու.

միքանի խայցարեր են: Սրանք են. Ալմալու, թուրքեր, 38 տուն, 182 ար. 200 իգ. իմիասին՝ 382 հոգի:

Գենալու, թուրքեր, 19 տուն, 92 ար. 101 իգ. իմիասին՝ 193 հոգի:

Աղ-ըիլիսա, Ղարա-Ղայեայի ստորոտում, թուրքեր՝ 13 տուն, 60 ար. 85 իգ. իմիասին՝ 145 հոգի:

Վարդանէս, Ղըդ-Հալասի-զազ լերան ստորոտում, որ հաւանօրէն Օրբելեանի յիշած Վարդենիքը պիտի լինի¹⁾: Այսուն ուշադրութեան արժանի է մի փոքրիկ լճակ, որ շնուռած է մի գոգաւորութեան մէջ, հարաւային կողմը միայն պատ քաշելով: Բնչպէս երևում է, ոս մի ժամանակ ծառայել է իրեւ յրամբար ուսուզելու մինչև Չուա զանուուց տափաստանները: Այժմ այս լճակն էլ կիսաքանդ է եղած: Բնակելչները նոյնպէս թուրքեր են, 23 տուն, 62 ար. 96 իգ. իմիասին՝ 188 հոգի:

Էլփին, տեղաւորուած է համանուն գետի երկու ափերին, շրջապատուած անտառապատ բլուրներով: Հարուստ է ազրիւրներգ, և վայելուչ, նոյն իսկ երկյարկանի բնակարաններով: Բնակիչները հայեր են, վայելչակազմ և առողջ մարդիկ, գաղթած Պարսկաստանի Սալմաստից և Սումայից. ընդումէնը 78 տուն, 425 ար. 300 իգ. իմիասին՝ 785 հոգի: Պարապում են երկրագործութեամբ, անասնապահութեամբ և այգեգործութեամբ: Սա միակ գիւղն է, ուր գետ ևս գործում են կտու, շալ և խսիր:

Էլփինի արևելահարաւային կողմում բարձրանում է մի սար, որ այժմ Ծրէշի-սար է կոչում, որովհետեւ վերան մեծ քանակութեամբ շրէշ է բուժուած: Այս կոնաձն բլրի տափարակ գաղաթին երևում են հին ամրոցի հետքեր: Թէ պ. Բայրեհրունին և թէ հայր Ալիշան ենթադրում են, թէ Օրբելեանի յիշած Նրբոյն բերդը սա պիտի մնի:

Արդալաս, գաղթել են Էլփինից, թուրքեր են՝ 42 տուն, 201 ար. 147 իգ. իմիասին՝ 348 հոգի:

Հեշին, թրքարնակ, 33 տուն, 131 ար. 120 իգ. իմիասին՝ 251 հոգի:

Քէօմուրլու, համանուն լերան լանջին, բոլորն էլ թուրքեր են, 25 տուն, 88 ար. 82 իգ. իմիասին՝ 170 հոգի:

Ջիւա, գետի երկու ափին, մի հարթ տարածութեան վրայ, գարդարուած պտղառու: Ճիւզի արևմանան կողմը զանուում է չին Չուայի գիւղատեղին, մի եկեղեցու հիմնապատերով և մի քանի անտրձանագիր խայցարերով: Սա մի գարու-

¹⁾ Օրբել. Տ. 8. լ. 90.